

ՏԱՆՁՈՒԱԾԸ

I

Ճլ՛փ, ճլ՛փ, ճլ՛փ... թափւում էր հալուող ծիւների շուրը կտուրներից և թիթեղեայ խողովակներից. փողոցներում կազմւում էր առուականման հոսանքներ և հոսում ընթագքի յարմար ուղղութիւնների վերայ:

Վասա օր էր. խստասիրտ երկինքը մռայլ էր ու դաժան. մուգ, թանձր, կուտակուած ամպերից տեղում էր ծնախառն անձրև. օդը փոքր ինչ տաք էր, և հէնց այդ տաքութիւնից էլ սաստիկ հալից էր. մանաւանդ անձրև՝ աւելի էր նպաստում հալուելուն: Խիտ ամպերի արանքից արեգակի մի շող անգամ չէր թափանցում խոնաւ երկրի վրայ: Փողոցներում սարսափելի ցեխ էր, անց ու դարձողների թիւը շատ. նրանցից շատերը հովանոցները գլխներին, տաք վերարկուների մէջ փաթաթուած, բետինի պսպղուն կրկնակօշիկները հագներին՝ ուրախ, զուարթդէմքերով՝ հապճեպով քայլում էին լպրծուն մայթերի վրայով ու անցնում հեռանում. նրանց փոյթը չէր՝ թէ ծիւն է, անձրև, եղանակը խիստ ու այլանդակ. նրանց ոչ մի բանին չէր խանգարում օրուայ վասութիւնը: նրանք ամեն միշոց ունեին ագարում օրուայ վասութիւնը: Եւ գալիս էին՝ նոր մարդիկ, նոր դէմքեր, նոր խմբեր՝ բոլորը հագնուած, ոմանք պճնուած, զուգուած, ոմանք, թէկ հասարակ, բայց ամուր հագնուած. մի խօսքով ոտներին տաք, մարմինները ամուր... ու անցնում էին հեռանում... Գալիս էին ու անցնում և այդպէս անվերջ...

Նոյն այդ մարդաշատ մեծ փողոցի մայթի վրայ կանգնած էր մի կիսամերկ, թշուառ մարդ. դժնդակ կեանքի հարուածներ աւնէր այդ մարդը իր վրայ, ասես քմահաճ բաղդը՝ խաղեր էր խաղացել նրա տառապող գլխի հետ. նրա մի ծեռքը ծոցութն էր, միւս մեռքը՝ որպէս մի անշարժ փայտի կտոր կա-

խուտած էր աշ ուսից. նրա զղեսար պատառուառն էր, ծուատուած փէշերով. անսրինակ ու կեղաստ լաթերով կարկատած էր նրա մնկները, թիկունքը ու ծախ թևի արմունկը. մի ոտքին հագած ունէր հին, երեսը նղուած կրկնակօշիկ, միւս ուսքին նոյնպէս հին, ծրմռուած ու նղնղուած կոշիկ. նրա ոտքերը բաց էր, երեսում էր սառած, կապուտած կաշին...

Այդտեղ կանգնամձ՝ նա հետամուտ էր լինում լաւ հաղնուած մարդկանց՝ հարուստներին և հացի փող պահանջում. ողորմութիւն չէր խնդրում, այլ մօտենում էր ու ասում.

— Քաղցած մարդ եմ, տուէք ինծ հացի փող:

Իսկ մարդիկ անտարբերութեամբ երեսները թեքում էին հեռանում, ուշադրութիւն զգարծնելով նրա խօսքերին, երբեմն սառնութեամբ նայում էին նրա նողկալի արտաքինին, սմբած դէմքին, և տսես թէ զգուանքներն էր շարժում այդ խեղն աւերուած մարդը, որ խոր խոցեր ունէր իր սրափ մէջ, իր ցաւոտ կրծքի տակ:

Այսօր նա ամեն անդամ մերժում էր և լոռութեամբ ետ կանգնում, և երբ տեսնում էր մի ուրիշն է դալիս, մօտենում էր կրկնում նոյն խօսքերը, նոյն ցաւոտ ու պահանջող շեշտով. այդպէս մի քանի անդամ պահանջեց, մերժուեց ու ետ կանգնեց:

Ահա դալիս են երկու գեր, հաստակիր պարոններ:

Թշուառականը մօտեցաւ նրանց և ծեռքը ծոցից հանելով ասաց.

— Պարոններ, քաղցած մարդ եմ, առուէք ինծ հացի փող:
Պարոնները մերժեցին:

— Աստուած տայ. ասացին նրանք ու անցան:

Մարդը վերստին ետ կանգնեց, դարձեալ ծեռքը դրեց ծոցը:

— Աստուած տայ... մըրմոաց նա ու մի թունոտ հայեացք ծղեց անցնող պարոնների վրայ.—Ո՞ւմ միջացով տայ... Հա՛, Աստուած տայ, որ Աստուածը... էն, որ անունը կայ ինքը չկա՞լ... չմմ. աղիքներս գալարում են—Աստուած տայ. սոված որդը կրծում է ներսս,—Աստուած տայ... Հը՛, Աստուած տայ: Դէ տուր. նա ծեռքը հանեց ծոցից ու բարձրացրեց վեր, և խօսքերը ուղղեց դէպի երկինք, ապա իշեցնելով ցած մրմնչաց ծաղրով.

— Տեսնում էք, հաց չի տալի քաղցածին, ծեր նանաչած
Աստուածը։

Ու մէկ էլ նորից վերև նայեց։

— Խենթ է՛... ասաց մի անցորդ ու դարձաւ ընկերոջը։ —

Տես ինչ է անում։

Ընկերը աեսնելով թշուառականի վեր ուղղած հայեսցըը
և երկարացրած վիզը, որից այլանդակօրէն դուրս էր ցցուել
բդի ոսկորը՝ երկար ու բարձր քրեցաց։

Մարդը ընդունեց իր նախկին անլոլդ դիրքը։

Շտապով քայլում էր մի գեղեցիկ պարոն հովանոցը գլխին,
և մի ոսկրոս ձառայ էլ նրա ետևից՝ լիքը կողովը ձեռքին։
Թշուառը նետուեց դէպի պարոնը, և ուղիղ նայելով նրա տէ-
քերի մէջ վստահ ու պահանջող ձայնով ասաց։

—Պարոն, տո՛ւէք ինձ փող, քաղցած եմ։

—Քաղցած... կրկնեց պարոնը։ — ձեռքիս ոչինչ չկայ հա-
ւասայ։

— Մարդ եմ, մարդկանց մէջ և քաղցած, ասաց թշուառը
նոյն վստահ ձայնով։ — Տուէք ինձ հացի փող։

— Զկայ, ասում եմ. խստութեամբ ասաց պարոնը ու իջաւ
մայթից, մի քայլ արաւ ու կրկին բարձրացաւ մայթի վրայ։
Մառան, որ մինչեւ այդ կանգնած կատաղի աչքերով նայում էր
խեղճին՝ հետևեց իր պարոնին... Թշուառականը նայեց նրանց
ետևից, նայեց հացով լի կողովին՝ որ իր քաղցած ախորժակն
էր գրգռում։

— Զկայ. կրկնեց նա ինքն իրան. ապա մի ինչ որ դրդու-
մով՝ վաղեց նրանց ետևից. թշոյլ ոտքերը հաղիւ փոխելով հա-
սաւ ձառային՝ ձեռքը մեկնեց և կողովից վերցրեց սպիտակ հա-
ցի մի փոքրիկ կտոր ու ագուհարար սկսեց ձամել։

Մառան իսկըն նկատեց։

— Ի՞նչ ես անում, լիմար. գոռաց նա և բռնեց խեղճին՝
աշխատեց խել հացի կտորը։ Ալիք միջոցին պարոնը ետ նայեց
և բարկացած հրամայեց ծառային։

— Խփի՛ր այդ անպիտանին։

Պարոնի հրամանը լսելուն պէս, ձառան լարձակուեց

թշուառի վրայ և ոսկրոտ ձեռքով երկու անդամ ուժգին խփեց նրան ճնոտին ու մի անդամ էլ ոտքով խփեց վտիս ճնկներին, որ նա ընկաւ ցեխոտ մայթի վրայ, բայց ոչինչ չխօսեց՝ մասց լուռ հացի կտորը ձեռքին. թիւ իւսոյ դժուարութեամբ բարձրացաւ ու սկսեց արիւն թքոտել: Հարու ածներից նրա բերանը արնել էր՝ արիւնով լցուել. մի կողմից արիւն էր թքում, մի կողմից էլ ծամում հացր: Ձնախառն անձրեւ թուփում էր նրա թիկունքին, բաց գլխին, որից հէնց նոր ընկաւ իւղածածկ գլխարկը ցեխի մէջ:

Պարոնը մօտեցաւ նրան. հրեց հովանոցի կոթով և ասաց.

— Ինչու հացը դողացար.

— Ինչու, չիմացար որ ասի քաղցած եմ:

Մօտեցող ոստիկանը երկու անդամ հրացանի սուխնով խփեց նրան և բղաւեց.

— Կորի՞ր, դու սատանայ:

Թշուառականի հիւանդոտ աչքերը փայլեցին. երկիւղի նշան խաղաց նրա նիհար դէմքին. նա հաւեա քաշուեց՝ երկչոսութեամբ որոնելով ընկած իր ցաւերի ու տանշանքների լուռ վկայ գլխարկը. տեսաւ, և վերցնելով թափ տուեց վրայի ցեխը ու ծծած զուրք. ապա հացը ծամելով, երբեմն-երբեմն էլ արիւն թքելով՝ գանդաղութեամբ քայլեց պարոնի գնացած նանապարհով. նա քայլում էր շատ դանդաղ. մի ոտքը գցում էր առաջ և միւսը հաղիւ քաշում նրա ետեկց. իսկ ազ թեւը օրօրւում էր ինչպէս թոյլ մեխուած մի փայտի կտոր: Պարոնն ու ծառան շատ հեռու չէին, նա ուղղում էր հասնել նրանց. հասնելը շատ հեշտ էր, բայց թշուառականի ոտքերն անդօր էին ու թոյլ. նա ճգնում էր քայլել շուտ-շուտ, արագ-արագ. սակայն ոտքերը, այն ցաւոտ ոտքերը չէին հնազանդուում նրա կտմքին. և նա աչքերը ծգած պարոնի և նրա ծառայի վրայ՝ քայլում էր. որքան ոյժ ունէր: Առատ շոայլքով պճնուած հասարակութեան մէջ, նա երևում էր՝ ինչպէս մի փալաս, գեղեցիկ, նոր շորերի շարքում:

Մռայլ երկինքը աւելի կախուել էր ցած. կտուրներից ձնաշուրը կաթ-կթում էր միակերպ, տաղտկալի նըլփոցով: Մարդը

սլկուեց և ընկաւ գետին. ծախս ծեռքով լենուեց վերկացաւ ու շարունակեց քայլել՝ իր ցաւոտ ընթացքով։ Տեղատեղ մարդկանց բազմութիւնը՝ նրա աչքից ծածկում էր պարոնին ու ծառային. բայց նա՝ նրանց ամեն մի քայլին հետամուտ էր լինում։

Պարոնը ծառայի հետ ծռուեց մի ուրիշ փողոց. տանջուած մարդի հետևող աչքերը նկատեց այդ, և նա ճիգ դորձ դրեց՝ որքան կարելի է շուտ հասնել։ Ինքը առաջ էր ընկնում, իսկ ուրերը ետ էին մնում. աշ ծեռքն էլ ասես նրա համար մի աւելորդ բեռ էր։

— Յոդնել էք, իմ թանկագին ուրերը. ինքն իրան խօսում էր նա: — Նատ էք քայլել, այնպէս չէ։ կեանքի քարոտ ճանաւարհը մաշել է ծեղ... Օօֆ... քայլեցէք, պարոնը գնաց ձառայի հետ... Վերջին խօսքերը արտասանեց՝ թոյլ ծիծաղով, և այդ ժամանակ նրա դէմքին փայլեց մի կծու, հեղնող ժպիտ։

Հասաւ այն անկիւնը, որտեղից ծռուեց պարոնը՝ փոքր ինչ կանգ առաւ, շունչ քաշեց, մի քանի անգամ խոր հոդւոց հանեց, ապա նայեց փողոցի ուղղութեամբ, բացի պարոնից ու ծառայից՝ ոչ ոք չկար փողոցում. կար երկու շուն, որոնք հոտհոտալով ոսկոր էին փինտրում։

— Տըրմ... խոր մտաժման մէջ երկարացրեց նա: — Դրանք ինձանից բաղդաւոր են. ոստիկանը դրանց ազատ շրջելուն արդելք չի լինում. իսկ ինձ քանի՛ անգամ են հայհոյել ու... էէ՛։

Նա շարժուեց և մի փոքր արագ քայլեց առանց. պարոնը այժմ հեռացել էր, հովանոցը զլսին ծառայի ետեկց էր քայլում։ Մարդը հեւալով փոխում էր ուրերը և երբեմն հաղում արիւն թքում. նա արդէն հացի կտորը կերել, վերջացրել էր, բայց ներսը սոված որդը գեռ չէր հանգստացել, նա պահանջում էր էլի—էլի։

Մօտենում էր պարոնին, մի քանի քայլ էր մնում փոխելու և ահա կհասնէր, ինչ ուզում էր ասել՝ կասէր, կխօսէր...։

— Պարոն, ծայնեց նա հեւացող ծայնով, և մեծ ու լայն դժեց քայլերը։

Պարոնն ու ծառան միաժամանակ ետ նայեցին ու էլի շարունակեցին քայլել։

—Պարոն, մէկ էլ կրկնեց մարդը:

Այս անգամ պարոնը կանգնեց. ծառան նորնպէս:

Տանջուած մարդը հասաւ նրանց ու զիմարկը մեկնելով
ասաց.

—Ա՛ռ, պարոն, առ զիմարկս քո հացի տեղ. ապա արիւն
թքեց, իւսոյ կոշտ հաղաց:

Պարոնը երեսը կնճռեց ու խիստ զայրացաւ:

—Կորիր, այ խճնթ:

Ու սկսեց քաղլել:

—Խճնթ... կրկնեց թշուառը. այս, խճնթ... կանգնիր,
պարոն, մի շտապի, խօսք ունեմ ասելու:

—Գիմ է, պարոն. նկատեց ծառան:

—Այս, խճնթ է. հաստատեց պարոնը:

Նրանք անցնում էին նեղ, ցեխոտ վողոցով. մօտեցան մի
տան, մուտքի առաջ կանգնեցին. պարոնը հովանոցը ծալեց և
թափ առւեց:

—Պարոն. լսուեց ռխճնթիս ձայնը:

—Օհ, անիծեալ, ի՞նչ է ինչ. դալրացկոտ ասաց պարոնը
ու դարձաւ ծառային.

—Տուր ինձ կողովը, իսկ դու՝ ալդ լիմար խենթին հեռա-
ցրու այստեղից. շուտ... հրամայեց նա ու ներս մտաւ:

—Պարոն, խօսք ունիմ ծեղ ասելու. ասաց խեղնը:

—Կորիր. լսուեց պարոնի նեղացած ձայնը:

—Տօ դիմ, կորի է. սպառնալից խօսեց ծառան: —Ի՞նչ
ես սոված շան նման աչքի դցել պարոնի շիրին: Քեղ ասում
եմ հեռացի. դէ, թէ չէ հօ... նա ցոլց տուեց բուռնցքը—այ,
ատամներդ կիշրեմ. խօմ տեսար սրանց ուժը. դէ, հեռացի ա-
սում եմ էէ... կիշրեմ:

Տանջուած մարդը կանգնել էր և աչքերը սկսենել տան
մուտքին. նա ոչինչ չէր խօսում, լուռ էր. բայց ներսը խօսում
էր, և ասես մի բան, շատ խորհրդաւոր բան կար թաղնուած
նրա տանջուած հոգում, նրա ցաւոտ կրծքի տակ: Նա դառն
ու կծու ժապաց:

—Հեռացիր է...

— Խօսք ունիմ պարոնի մօտ:

— Դէ կորի՛ է, զիժ հայւան, ուժդին բոթելով ասաց
ծառան:

— Խեղճը սայթաքեց ու վայր ընկաւ քարերի վրայ, այդ
ընկնելուն՝ սասափկ պէտք է ցաւէր, սակայն ասես նա ցաւ չը
զգաց. վեր կացաւ զնող հայեացքով նալեց տանը, մուտքին.
ինքն իրան ինչ որ մրմռաց ու քայլեց եկած ճանապարհով:

Ճնախառն անձրկը դեռ շարունակւում էր թափուել. ա-
հաւոր ամպերը հետղնեաէ թանձրանում էին ու խտանում. հա-
լուածքից դոյացած առուակները՝ հոսում էին կառքերի անիւ-
ների ակօսած տեղերով. իսկ կտուրներից ձնաշուրը թափուում
էր, թափուում:

Նա՝ այն աւերուած մարդը, դարձեալ գնում էր այն բաղ-
մամարդ փողոցը, որտեղ անց ու դարձ էին անում՝ կեանքի
աէրերը, կեանքի ծովում լողացողները. նրանք՝ որոնց ժպտում
էր քմահաճ բաղդը. նրանք՝ որոնք ապրում էին լի ու առատ,
հանգիստ խաղաղ. նրանք՝ որոնք անտարբեր, անկարեկից են դէ-
պի թշուառը, դէպի խեղճը, և նրանք՝ որոնց սրտերը քար է,
հայեացքները սառն ու արհամարհող...

— Այս, քար են, բոլորը քար են. շուրջս առևն ինչ քարից
է, տները, պատերը, փողոցները... և մարդիկ, մարդիկ... Խօ-
սում էր նա և քայլում ցաւոս դանդաղութեամբ. նրա շորերը
թրչուել, չուր էր դառել...

Եւ նա դարձեալ քայլում էր...

II

Նոյն օրը երեկոյեան, երբ արդէն ծիւնը դադարել էր, հա-
լուող ծիւները սառել, բարձրացել էր սառնաշունչ ցուրտ քամի՝
տանջուած մարդը կանդնել էր իր ատամները արնացնել տուող
պարոնի տան առաջ: Նա ուզում էր մտնել ներս, գնալ պա-
րոնի մօտ և ասել նրան այն բոլորը, ինչ որ գիտէր, ինչ որ
մթերուած էր իր ճնշուած կրծքի տակ. բայց տատանուում էր,
չգիտէր ինչ անել. ապակեփալ աչքերը գցել էր տան մուտքին,
և նայում էր երկար, զննողաբար հայեացքով... Ահա մի քայլ

առաջացաւ ու կանդ առաւ. նա վախեցաւ՝ թէ մի դուշէ կը պատահի այն անողորմ ծառային. մի քայլ էլ արաւ ու կանգնեց մի վայրկենաչափ, ապա վճռական քայլերով բարձրացաւ երկրորդ լարկը. նա արդէն տեսել էր՝ թէ որ դրնով որ սենեակը մտաւ նա, այն պարոնը: Բարձրացաւ պատշաճմբ, մօտեցաւ սենեակի դրան՝ կանգնեց սրտի բարախիւնով ապակիներից նայեց ներս՝ աչքովը ոչինչ չընկաւ., մի քանի անդամ ետ նայեց, էլի ժառանիցն էր վախենում, տեսաւ ոչ ոք չկայ, սրտավնդեց ու ուժդին հրեց դուռը, որ մեծ թափով դիպաւ պատին, ապակիները զնդագացին ու աղմուկ բարձրացրին. ինքը մտաւ ներս. այդ ծայնին մի ուրիշ սենեակից վաղեց այն գեղեցիկ պարոնը և յանկարծ կանգնեց մեխուածի նման, չուած աչքերը ծղեց խեղճի վրայ և ասես թէ սարսափեց տարօրինակ, անժամ այցելուից. նա իսկըն ճանաչեց, թէ ով է այցելուն. ըստ երևոյթին լրումը տիրել էր նրան:

Այցելուն ոչինչ չխօսեց. վստահութեամբ մօտեցաւ մի աթոռի և նստեց վրան: Նա իր ցնցոտիներով ու խնճուած մազերով մի զզուելի կեղտոտ առարկայ էր, այդ շքեղ կահաւորուած սենեակի առարկաների շարքում. եղեկելի դէմքին մի տեսակ ժպիտ էր նկատուած, որով կարծես հեզնուած էր, այդ բոլոր զարդարանքները, այդ բոլոր կարասիքը և դրանց վայելողի զարմանքն ու սարսափը, և կարծես ասելիս լինէր՝ «ինչո՞ւ ես ապշել...»: Քիչ լետոյ նա փոխեց ժպիտը և բարեկամական հայեացքով սկսեց նայել պարոնին, որը արծանացել էր իր տեղում և աչքերը զարմանքից չուել:

— Ի՞նչ ես կամենուած. հարցը եց տանտէրը առաջ գալով:

— Ե՞ս... ես ոչինչ չեմ կամենուած, այնպէս սիրոս ուզեց եկայ:

Պատասխանը չափաղանց տարօրինակ էր, տանտէրը դունատուեց. նա երեխ մտածուած էր, որ այդ մարդուց վաստ հոտ էր փչուած, ի՞նչ ունէր որ եկել էր իր մօտ, խենթ մարդ է, չինի թէ իր կեղտոտ լաթերի ծալքերուած մի բան պահած լինի, ու հանի վնասի... նա անհանգստութեամբ հարցը եց.

— Ինչո՞ւ համար եկաք:

— Ե՞ս:

— Հա, դուք:

— Ես եկայ ձեղ տեսնելու. անվրդով ու անլոյդ պատասխանեց մարդը:

— Ինձ տեսնելո՞ւ... ով ես դու:

— Փողոցի մարդ, որ բերանս արիւն լցնել տուիր. ասաց թշուառականը ու ժպտաց:

Պարոնը աւելի գունատուեց. նա դիակը և ճանաչում էր, որ այն մարդն է, որին իր հրամանով ծառան խփեց ատամները արնացրեց. բայց ի՞նչի է եկել, արդեօք վրէժ առնելո՞ւ, թէ մի ուրիշ բանի:

Մարդը զգաց, որ պարոնը երկիւղ քաշեց և վախեցաւ իր ներկայութիւնից՝ ուստի ժպտալով հարցը եց.

— Ինձ չէք ճանաչում:

— Ինչպէս թէ չէք ճանաչում:

— Այո, չէք ճանաչում, ով եմ ես:

— Դու ով ես, որ ճանաչեմ քեզ:

— Ե՞ս... միթէ չէք ճանաչում... իրաւունք ունէք չճանաչելու, որովհետեւ ես էլ մարդ չեմ, այլ մարդկային տականք... իրաւունք ունէք: Այո:

Ճանաչը ապշած նայում էր այդ ցաւոտ մարդուն. դուցէ ուզում էր լիշել թէ ով է, և դրա համար ձեռքը ճակատին դրած երեկի պեղում էր անցեալի լիշողութիւնները, թարմացնում էր թմրած ուղեղը, բայց լիշել, ճանաչել չէր կարողանում... և նա աթոռին նստելով հարցը եց.

— Ո՞վ ես, չեմ ճանաչում:

Թշուառականը կրկին ժպտաց:

Այդ ժպիտը դուք չեկաւ տանտիրոջ:

— Հարցնում եմ, ով ես, պատասխանիր. լօնքերը կիտած դիմեց նա անհաճոյ այցելուին:

Մարդը դարձեալ ժպտաց. ապա սկսեց հանդիսաւ խօսել.

— Ես մի աւերուած մարդ եմ, ես էլ ձեղ պէս մարդ էի, բայց թալանուեցի կեանքի ցաւոտ ճանապարհում... Այո, մարդ էի, իսկ ի՞նչ եմ այժմ... մի արորուած, մերժուած, տանջուած

ու քաղցած արարած, մի անպէտք փշրուած մեքենայ, որ ոչ մի բանի չի հարկաւորում... Նա լռեց և մտածում էր, որ տանտէրը հիմա կիսանաչի իրան՝ կամ ծայնից, կամ դէմքից, կամ մի որեւէ նշանից:

Բայց ոչինչ չեղաւ, տանտէրը նորից հարցրեց.

— Ո՞վ էր և որտեղացի:

— Ես մարդ եմ:

— Այո, գիտեմ մարդ ես, բայց ի՞նչ մարդ:

— Ո՞չ, դուք ինձ մարդ չէք համարում. սակայն ես մարդ եմ. հարուսա քար աշխարհն էլ իմ հայրենիքն է, դուք էլ իմ անխիղն և ցաւերիս անտարրեր եղբայրն էք. ձեզ նման անխիղն ու անողորմ եղբայրներ շատ ունիմ այս ապառ աժ աշխարհում...

— Ի՞նչ էք ուղում ասել դրանով:

— Նատ բան, պարզ նշմարտութիւններ:

Երկուսն էլ պահ մի լռեցին:

Տանտէրը երեկի մտածեց, որ ալցելուի արտաքինը, հեգնող ժպիտը և վստահ խօսելիր լաւ բան չեն ասում. մանաւանդ, որ չի ասում՝ թէ ո՞վ է ինքը և որտեղացի: Նա կնճռեց երեսը, վերկացաւ և դայրացած ասաց.

— Ոչինչ չի հասկացւում ձեզանից, ես բան եմ հարցնում, իսկ դուք խենթի պէս էք պատասխանում: Բան ունիք ասելու ասացէք, թէ չունիք՝ դուրս գնացէք:

— Դուրս գնամ...

— Այո, դուրս գնացէք, ես ժամանակ չունիմ ձեղ լսելոււ...

— Ժամանակ չունէք լսելու...

— Այո, ես աեղ եմ գնալու, աղատեցէք ի՞նձ ձեղանից:

— Ձեղ ով է բռնել, կարող էք գնալ, ուր որ ուղենաք:

— Ակդ իմ բանն է, կարող եմ թէ չեմ կարող. նախ դուք այսաեղից դուրս գնացէք. ասաւ ու աթոռի վրայից վեր կաշցաւ, հանեց ժամացոյցը նայեց.— Արդէն ժամանակն է խօսեց ինքն իրան:

— Ուրեմն ինձ չէք նանաչնում. ասաց թշուառականը և հառաջելով վերկացաւ ու քայլեց դէպի դուռը.— Ինձ խենթ էք անգւանում, այնպէս չէ...

— Ալժ, այս, գնա, հեռացիր:
 Մարդը դուրս ելաւ, իշաւ ստնդուխտներից ու կանդնեց
 փողոցում:
 Նա սպասում էր պարոնին:

III

... Արդեօք դուրս պիտի գայ, թէ ինձ գլխից ռադ անելու
 համար առաջ՝ — տեղ ունիմ զնալու... պատի տոկ կանգնած
 մտածում էր մարդը:

Կաթնագյշն նօսր մառախուղը լցրել էր փողոցները. լավ-
 տերները վառւում էին և իրանց թափանցիկ լոյսի անորոշքե-
 րով լուսաւորում փողոցները: Ասաղազարդ գիշեր էր. ցուրտ
 էր ու պարզկայ, բայց տանջուած մարդը ասես ոչինչ չէր զգում,
 ասես նրա կիսամերկ մարմին չէր ազդում այդ ցուրտը...

— Զէ, ես կապասեմ նրան, դուրս կդայ՝ ամեն ինչ կիշե-
 ցնեմ, կ'ասեմ, և այն ժամանակ... թէ դուրս չի գայ՝ կթողնեմ
 կհեռանամ... յետոյ գուցէ մի օր, մի տեղ կպատահեցնեմ...

Ալսպէս էր մտածում նա, երբ յանկարծ սանդուխտների
 վրայ լսուեց ոտնածայներ: Պարոնն էր, դուրս եկաւ տան մուտ-
 քից ու քայլեց. նա չնկատեց պատի մօտ կանգնած մարդին, ո-
 րը շարժուեց տեղից ու սկսեց հետեւ իրան:

— Հիմի չ'ասել, — մտածում էր մարդը հետեւով պարո-
 նին: — Ալո, ասել, սրանից լաւ տեղ չկայ: Եւ նա վճռեց իր
 մէջ՝ ասել:

— Պարոն. ձայնեց նա:

Պարոնը կանգնեց ու ետ նայեց. բայց ոչինչ չխօսեց:

Մարդը մօտենալով հարցրեց.

— Յիշում էք այն, պարոն:

Պարոնը ապշեց և հանաչելով նրան երկիւղով խօսեց.

— Ի՞նչը, փողոցի բռունցքները. դուք արժանի էք դրան:

Պարոնի ձայնը լուզմունքից ու երկիւղից գողում էր:

— Զէ պարոն, բռունցքները չէ. բռունցքների համար ես
 ոչինչ չեմ ասում. ես շատ ուրախ եմ, որ բռունցքները ձեղա-
 նից ստացայ. եթէ ուրիշ մարդից ստանայի՝ կտրտնջայի, բայց

որ ծեղանից է, այսինքն քո ծառայից՝ շատ ուրախ եմ... Ես ձեղ բան պիտի հարցնեմ և խնդրում եմ պատասխանեք...

— Ի՞նչ բան:

— Մի պարզ ճշմարտութիւն:

— Ես ժամանակ չունիմ ձեղ լսելու և պատասխանելու:

— Կա՞լ, երկու խօսք: — Յիշում է՞ք գուք, թէ երիտասարդ ժամանակներդ, ով էր ծեր մտերիմ և հաւատարիմ ընկերը:

— Ի՞... ձեռքը թափ առեց պարոնը և քայլեց: — Ես ընկեր խսկի չեմ ունեցել, որտեղից լիշեմ:

— Մի շտապի, պարոն, կանգնիր, ասաց թշուառը, — երկու խօսք ունիմ:

Պարոնը կանգ առաւ և դայրացած ասաց.

— Ի՞նչ էք ուղում. հացի փող... առէք. նա ձեռքը դըրականից հանելով մեկնեց: Փողոցի մշուշապատ լապտերի աղօտ լուսով տեսնում էր նրա ձեռքի սև հինգ կոպէկանոցը, որ պարզէլ էր թշուառականին,

Բայց մարդը չուզեց, հրաժարուեց ասելով.

— Ողորմութիւն... չէ, պարոն, շնորհակալ եմ. Ես այսօր կուշտ եմ սովորականից. արիւնով շաղախուած հաց կերպ, միթէ դուք չտեսաք... Ես ձեղ հարցնում եմ՝ թէ...

— Ի՞նչ, անհանգստութեամբ ընդհատեց պարոնը: Ըստ երեցիթին նրա երկիւղը երևի բաղմապատկուեց, որ ձեռքում սղմեց ձեռնափայար և պաշտպանուելու դիրք ընդունեց:

— Հարցնում եմ, թէ ով էր ծեր երիտասարդութեան ընկերը:

Պարոնը գլուխը կախեց, ապա բարձրացնելով ասաց.

— Չեմ լիշում ոչ մէկին:

— Չէք լիշում... եթէ ունեցել էք, անպայման պէտք է լիշէք:

— Է, ով է միտք դարձնում նրանց վրայ. կամ նրանց լիշելս ինչ օգուտ. ծանծրացած ասաց պարոնը և ոտքը վոխեց:

— Կաց, կաց ասեմ:

Պարոնը ասես էլ երկիւղ չունէր. նա տեսնում էր, որ մարդը հանգիստ է, ուստի կանգնեց և ասաց.

— Ասու:

Թշուառականը մի քայլ փոխեց դէպի պարոնը և կանգնեց:

— Քեզ ո՞վ ազատեց խեղդուելուց, սկսեց նա. այժմ եղակի էր խօսում հետք. — որ երիտասարդ ժամանակդ լողանում էիր մի վարար դետում... ո՞վ էր, որ փրկեց կեանքը:

— Ի՞նձ:

— Ալո, քեզ:

— Ես ունեի մի բարի ընկեր, այժմ մեռած. նա ազատեց իմ կեանքը: Ես հոգով նրան եմ պարտական... իսկ դու ո՞վ ես, որ անցեալս գիտես:

— Ես մի ժամանակ մարդ եմ եղել. իսկ հիմա չե...

Լոեցին:

— Ասեմ, լսեցէք. շարունակեց մարդը: — Յիշում ես, որ քո գողութեան հասմար հայրդ զուրս արաւ քեզ իր տնից և ծառաներին հրամայեց ներս չժողնել քեզ իր շէմքը... այսաեղ սլացող կառքը անլսելի դարձրեց նրա խօսքերը: — Եւ այն օրից, դու հալածական ու անապաստան շըշում էիր փողոցներում, ով ապաստան առուեց քեզ, ով եօթ-ութ ամիս կերակրեց քեզ իր գրպանից, պահեց իր տանը, խնամեց եղբօրից լաւ... Յիշում ես, որ նրա փողն էլ հատաւ, և նա զնաց պարաք արաւ քեզ կերակրեց, երբ հիւանդ էիր բժշկել տուեց, առողջացրեց. իսկ հայրդ բոլորովին չէր մօտենում, և քեզ իրան որդի չէր ճանաչում: Կարծում եմ անշուշտ գիշելիս կլինես:

Պարոնը զլուխը կախ, աչքերը գետնին լսում էր և լուսւմ. քիչ լետոյ նա հազար մի անդամ և ասաց.

— Նոյն ընկերս, ողորմի հոգուն:

Թշուառականը ժպտաց:

— Յիշում ես, շարունակեց նա, — երբ մի անդամ քեփի ժամանակ կոկւ եղաւ քեֆ անողների մէջ, քեզ ուղում էին սպանել կամ խեղդել քո լպիրշ խօսքերի համար. ով էր քեզ ազատողը, վտանգից փրկողը, որ քո փոխարէն ինքը վիրաւորուեց թեկից... Նրանից լետոյ դու թողիր և հեռացար: Իսկ այժմ, դու ո՞րտեղից գիտես, որ նա մեռած է ու թաղուած:

— Ես կարծում եմ, որ մեռած պիտի լինի. խօսեց պարոնը անհաստատ և ցածր ծայնով, աչքերը զցած մօտիկի մշուշապատ լապտերին: — Դու ո՞վ ես, քո ծայնը կարծես թէ ինձ ժաննօթ է երևում:

Մարդը լուռ էր:

Ցուշտը հետզհետէ սաստկանում էր. մի կողմից էլ սառը քամի էր փչում. բայց այդ մերկ վախտ թշուառը՝ ասես ոչինչ չէր զգում. նրա ներսը կար այնպիսի մի բան, որ թոյլ չէր առկիս զգալու՝ ոչ մըսելլը և ոչ ցուշտը. նա տաքացած էր և բորբոքուած:

— Ես ո՞վ եմ... կամացուկ շշնչաց նա:

Կէս ըոսկէ երկուսն էլ լուռ էին. պարոնը երեկի լիշում էր անցեալի դէսքերը, և գուցէ նրա մաքով՝ շարար-շարան անցնում էր բոլոր պատահարները իր մանրամասնութիւններով. նա ոչինչ չէր խօսում, բայց նրա լուռ թիւնը շատ բան էր ասում: Իսկ խեղճ մարդի ուզում էր խօսել երկար, լիշեցնել նրան երիտասարդութեան բոլոր դէսքերը, և շատ-շատ բաներ, բայց դսպում էր իրան, և թողնում էր, որ նա լիշի այդ ամենը:

— Ես տեսնում եմ, որ ձեր ծալնը ինձ ծանօթ է երեւում, բայց չզիտեմ թէ ով ես դու. լուռ թիւնը ընդհատելով խօսեց պարոնը:

— Ո՞վ եմ ե՞ս... Զարմանալի է, որ չէք ճանաչում... տարիներով ապրել մի մարդի հետ և ճնանաչել նրան... տարօրինակ է...

Պարոնը ցնցուեց. ծեռնափայտը դողում էր. նրա ծեռքում:

— Այ, հիմի ասեմ թէ ով եմ ես. ասաց թշուառը և աւելի մօտեցաւ: — Ես նա եմ, որ տղատեցի քեզ խեղդուելուց, և թոյլ չտուի զոհ գնալ շրին...

— Է՞ր... մզզաց պարոնը, երեկի ուզում էր խօսել, բայց խօսքերը խեղդուեց կոկորդում:

— ... ու գետի եղերքից շալակեցի տարայ ձեր տուն: — Ես նա եմ, որ կերակրեցի քեզ սպանութիւնից, և քո փոխարէն վիրաւորուեցի աշ թեկից, որի համար ծախեցի տունս, տեղս և ամեն ինչ. բայց չըուժուեց սա, կենդանութիւն չստացաւ. մնաց անշարժ ու չորացած... և այժմ տեսնում

— Օ՛, աղնիւ... դուրս թռաւ պարոնի բերանից:

— Ես նա եմ, որ ազատեցի քեզ սպանութիւնից, և քո փոխարէն վիրաւորուեցի աշ թեկից, որի համար ծախեցի տունս, տեղս և ամեն ինչ. բայց չըուժուեց սա, կենդանութիւն չստացաւ. մնաց անշարժ ու չորացած... և այժմ տեսնում

Ես՝ ինչ եմ ես. ինչպէս դու ասում ես—մեռած, Այո՛, մեռած
եմ, բայց թաղուած չեմ:

Զգալի էր, որ ցաւը, սրտի մաղձը, կուտակուել էին
նրա կրծքի տակ և այժմ դուրս էին ժայթքում խօսքերի ան-
զսպելի հոսանքով:

—Ես, ես, եմ... կերկերաց պարոնի ծայնը.—իմ կեան-
քով քեզ եմ պարտական... ով իմ ազնիւ բարեկամ... Ոփ, ով
կարող էր երեակայել, որ այդ դու ես, .իմ դժբաղդ ընկեր...

—Ոչ, ոչ ես մեռած եմ, բայց թաղուած չեմ. դեռ լսիր
տրորուած ու աւերուած մարդի խօսքերը:—Դու եղել ես քաղ-
ցած, պէտք է լաւ իմանաս քաղցածի վիճակը... Ես քաղցած
էի, քու կողովից վերցրէ մի կտոր հաց, բայց դու այդ մի կտոր
հացի համար՝ բռունցքներ ուտեցրիր և արիւնը բերանս լցրիր:
Ճիշտ է, զու ինձ չէիր ճանաչում և այդպէս վարուեցիր. եթէ
ճանաչէիր, չէիր անի. բայց ինչո՞ւ այդպէս վարմունք ես բանե-
ցնում խեղների վրայ. չէ որ դու էլ ես եղել նոյն վիճակում,
նոյն օրում...

Պարոնը դողդողում էր. նրա շրթունքները ասես կպել էին
իրար, ոչ մի բառ չէր կարողանում արտասանել. այլ ամօ-
թահար, պղուխը կախ՝ լսում էր գատապարտեալի պէս:

—Երբ որ դու քաղցած էիր, վշտանում էիր մարդկանց
վրայ և շարունակ կրկնում՝ «—Մարդկանց զգացմունքը բիրտ
է, նրանք միայն իրանց համար են մտածում, էլ չեն նայում
շուրջները վիստացող տառապեալներին ու քաղցածներին...» Եւ
այդ խօսքերը ասում էիր դու. դու, որ կարող էիր ամեն դործ
կատարել, որովհետեւ ունէիր առողջ մտրմին և առողջ բազուկ-
ներ... իսկ այժմ ուր են քո այն խօսքերը... Մոռացել ես, ո-
րովհետեւ փորդ կսւշտ է, հօրդ մահից յետոյ ժառանգել ես նրա
կարողութիւնը, պսակուել ես մեծ օժիտով աղջկայ հետ և կուշտ
ես, միայն քո համար ես մտածում. էլ փշթղ չէ՝ թէ շուրջը
լիքն են քաղցածներ ու սովատանջներ... Այո, այդպէս են մար-
դիկ. նեղ օրում դառնում են հրեշտակ և անդադար բարու-
թիւնից ու խղճից խօսում. իսկ լին օրում՝ դառնում են ան-
խիղն գազան. այդպէս էլ դու:

Փողոցներում անց ու դարձը դադարել էր և ամեն ինչ լռել:
— Օ՛, ազնիւ հոգի... հազիւ արտասանեց պարոնը և ու-
ղեցաւ շարունակել՝ բայց ձայնը խեղդուեց կոկորդում:
— Այժմ տեսնում ես ինձ, թէ ինչ եմ. ցնցոախներում
թաղուած՝ մի փշրուած մարմին, մի ոսկրացած կմաղք, մի տա-
ռապող, սողացող արարած, մի հիւանդ ու վշտոտ հոգի...
Դու այժմ լողում ես կեանքի ծովում՝ ինչպէս քո քէֆն է ու-
ղում. իսկ ես՝ տանջուելով տառապում եմ, և քեզ պէս պա-
րոններն էլ՝ հացի փող ուղելիս՝ մերժում են ու արհամարհում:
Ճիշտ ես նմանում եմ այն անդեկ, ծւատուած առաջաստնե-
րով նաւակին, որ մըրկուած ծովի երեսին՝ ալիքներն ու փո-
թորիկները քշում են դէպի կորուստ: Այս, իմ առաջաստները
ծւատուած են և բաղուիներս, որ մի ժամանակ բրոնզի պէս
էին, հիմա թուլացել են ու անզօրացել...

— Օ՛, ազնիւ ընկեր... իրան մոռացած հառաչեց պարոնը.—
Ես... երբէք... երբէք չէի կարող...
Թշուառականը երկար-երկար հաղաց, թքեց. և վերջը դար-
ձաւ պարոնին.

— Այս է իմ օրը, երջանիկ մարդ:
— Էլի սկսեց հաղալ:
— Լսիր, ինչ եմ ասում, բաղդաւոր մարդ. նորից խօսեց խեղճը:
— Որովհետև մի ժամանակ դու էլ եղել ես քաղցած, ուստի իրնդ-
րում եմ, որ խեղճերի հետ այնպէս չվարուես, ինչպէս վարուե-
ցիր ինձ հետ: Եղիր բարի և բարի՝ ինչպէս ես բարի էի դէպի քեզ:
Պարօնը դողդողալով մօտեցաւ խեղճին և թողութիւն
խնդրողի նման բռնեց նրա ձեռքը, նայեց նրա աչքերի մէջ և
ասաց կամացուկ.

— Ինչով կարող եմ քեզ օդնել, իմ անբաղդ ընկեր ասա ինձ:
— Ես օդնութեան կարօտ չեմ, ազնիւ պարոն: Օգնու-
թիւն ես ուղում անել, ինձ նման խեղճեր շատ կան, նրանց
օգնիր... Այս քանի՛ տարի է անօթեան ու կիսամերկ շրջում
եմ աշխարհում, ոչ մի օգնութիւն չի եղել մարդկանցից և այժմ
էլ չեմ սպասում, որովհետև, ինչպէս ասացի, իմ նաւակը
դէպի կորուստ է գնում:

— Իմ իւեղն ընկերո, ինչու ես մերժում օգնութիւնը։ Գը-
նանք մեղ մօտ։

— Շնորհակալ եմ... քեզ էլի ասում. եմ, որ լինիս բարի և
անես բարութիւն. որովհետեւ բարութիւնը ստեղծում է հոգու
և խղճի խաղաղ զրութիւն... Ես միայն այսքանն էի ուզում
քեզ ասել, ուրիշ ոչինչ. բռունցքների համար չեմ տրտնջում,
որովհետեւ քեզանից ստացալ...

Նա շուռ. եկաւ և քայլեց։ Պարոնը շշմած դրութեան
մէջ՝ մնաց կանգնած միւնոյն տեղը։

Աստղաղարդ պարզկայ գիշեր էր։

IV

**Տանջուած մարդը հազարով ու թքոտելով շարունակեց
քայլել։**

Քայլելով հասաւ մի մեծ դարպասի ու կանգնեց. նայեց
շուրջ՝ ոչ ոք չկար, միայն փողոցում, շատ հեռու մի ստուեր
էր նշմարւում։

— Անպատճառ ոստիկան կլինի. մտածեց մարդը ու մօ-
տեցաւ նստեց դարպասի մօսի երկար նստարանի վրայ և մի
անգամ խոր հառաչեց. քիչ լետոյ առողջ ծեռքը դնելով դիմա-
տակը՝ մեկնուեց չոր տախտակի վրայ, ուզեց քնել, աչքերը
խփեց, կրկին բաց արաւ. ցրտիցը քունը չէր տանում. խեղճի
կիսամերկ մարմինը դողում, մրսում էր. նա ոտքերը քաշեց ի-
րան, կուչ եկաւ, աչքերը խփեց ու մնաց արթուն. Մի քանի
անգամ բարձր ու երկար հազար, և նորից աչքերը խփեց։

Հազոցի ծայնին եկաւ դռնապանը, կանգնեց խեղճի դիմա-
ւերեր ու ծայն տուեց։

— Է՞ս, ՞ով ես։

— Մարդը ոչինչ չխօսեց։

— Էս, քեզ հետ եմ, բոթեց ծառան։ — Հարցնում եմ, դու
ո՞վ ես։

— Ես եմ. ասաց խեղճը թեք ընկած։

— Ո՞վ ես։

— Մարդ. նրանցից մէկը։

- Որոնցից մէկը:
 — Ինձ նման միլլիօններից մէկը, ապօ՛ւշ:
 — Խելագար է՛... մրմռաց դռնապանը. ապա զայրացած
 բղաւեց:
 — Հեռացիր այսաեղից:
 — Ինչի՞՞ հեռանամ, վնաս եմ տալի. բարձրանալով խօ-
 սեց խեղճը:
 — Դէ զնա, հեռացիր. պարոնը հիմա կդայ կլուրից:
 — Է, թող դայ, ի՞նչ պիտի անի:
 — Գիտե՞ս, մեր պարոնը հրամայել է կեղաստ մարդկանց
 չթողնել հայեաթը. դէ հեռացիր քանի չի եկել, թէ չէ որ եկաւ
 ինձ պիտի հրամայի քեզ ծեծել, որ միւս անդամ չդաս էստեղ:
 — Ո՞վ է քս պարոնը:
 — Էս աների տէրը:
 — Համ. մարդ է՞:
 — Բա ինչ է:
 — Թքած դրա վրայ:
 — Կորի, կորի. բարձրացաւ դռնապանը. — Էլ մի կանգնի:
 — Մարդ է. մրմռալով քայլեց թշուառը, — հարուստ մարդ,
 և հրամայում է կեղաստներին ծեծել...

Նա և՛ քայլում էր և՛ մտածում՝ մի տեղ դտնել գիշերեկու-
 համար, մի տեղ թաղցնել իր մերկ, վտիտ, ջարդուած մարմի-
 նը, և մի կերպ անցկացնել այս վատ, պարզկայ գիշերը. բայց
 քա նի՞ այսպիսի գիշերներ պիտի անցկացնի՝ մինչև դարունը,
 տաք եղանակները դան. և ինչո՞ւ անդարձ չեն անցնում այս
 դաժան օրերը... և ինչո՞ւ ինքը չի մեռնում ու միանդա-
 մից ազատում այս անվերջ ատառապանքից. միթէ մեռնելլ լաւ
 չէ, այսքան տառապելուց... այո, հազար անդամ լաւ է... այս-
 պէս մտածմունքով քայլելով՝ նա կանգնեց մի տակառի մօտ,
 մեծ շա քարի տակառ էր, խանութի առաջ տնկուած... Տան-
 չուած մարդը ծեռքը հանեց ծոցից, տակառը զգուշութեամբ
 վայր դրեց դետին. տակառի մէջ ծղնուտ կար. նա մի կողմ ա-
 րեց այդ ծղնուտը ու սողաց ներս՝ մեկնուեց, իւտոյ ոտքերը
 քաշեց իրան, ապա խոտը վրան ածեց՝ մէջթը ծածկեց ու լոեց:

Այժմ նրա մտքով անցնում էր անցեալ գիշերուայ դէսպը. — ինչպէս ինքը էն գիշեր մտաւ տակառի մէջ ու քնեց. խանութպանն էր թէ մի ուրիշ անողորմ մարդ նկատել էր՝ ոտքով խփելով տակառը դլորեց ու քրքչաց. և ինքը ինչպէս կէս քուն, կէս արթուն դրութեան մէջ բղաւելով դուրս պիծաւ տակառի միջից... այն գիշերն էլ այս գիշերուայ պէս պարզկայ չէր, մեղմ էր, այդ բոլորը մանրամասնաբար անցնում էր. նրա մրտքով ու երկիւղ ծագեցնում նրա սրտում թէ մի գուցէ այս գիշեր էլ նոյնը չպատահի. նա աչքերը խփեց, մարմինը աւելի կծկեց ու լուռ կացաւ:

Սառը քամի էր փչում ու ծիւնի փոշին դէս ու գէն ցրւում. գետինը սառում էր, կարծրանում. տակառի ճեղքերից սողում էր ցուրտ քամին ու տանջուած մարդի բղկտուած մարմինը ծակոտում. նրա ատամները զարկւում էին իրար ու չխկչսկում. նա աւելի ու աւելի կծկւում էր կուչ գալի և ծղնոտին կպչում:

Մերկութիւնը, քաղցածութիւնը և երկիւղը աւելի աղդում էին նրա մրսելուն:

— Ո՞հ, անիմուխս կեանք, մրմնչաց նա, — լու է մեռնել, քան սողալ քաղցած ու մերկ այս նզովուած աշխարհում... ո՞ւ... ո՞ւ... ո՞ւհ... .

Հետզհեաէ քամին ուժեղ բնաւորութիւն էր ստանում. թշուառականն էլ աւելի սղմում էր ատամները. բայց ի զո՞ւր. նրանք անդադար զարկւում էին իրար: Վերշապէս նրա մարմինը անդպայացաւ. և մի ինչ որ թմրութիւն իշաւ վրան. բիբերը ծանրացան ու քնեց:

Քամին նւռում էր ու լալիս այդ ցուրտ գիշերին. և այդ գիշերուայ ստոր գրկում հանգստանում էր մի տանջուած մարմին, մի տառապող գլուխ, որ երկար տարիներ ցաւը շալակած քաշ էր տալիս իր թշուառ դոլութիւնը թշուառութեան ու անխղնութեան անծայր անապատի մէջ:

Աստղազարդ պարզ գիշեր էր:

V

Առաւօտեան խանութպանը, շատ վաղ բացեց խանութը
և նկատեց, որ տակառը զլորուած է գետին. մօտ գնաց, ու-
ղեցաւ ուղղել՝ տեսաւ մարդ կայ մէջը. իսկոյն ճանաչեց, որ
անցեալ գիշերուայ մարդն է, զայրացաւ.

— Ես, լիմար, վեր կաց. բղաւեց նա ու ութով հարուածեց:
Բայց մարդը անշարժ էր:

— Տօ, քեզ չեմ ասում, վերկաց է... և էլի մի քանի ան-
դամ հարուածեց:

Նա չէ զարթնում, քնած է:

Խանութպանը տեսաւ որ չի ենում, տակառը զլորեց ու
դարձաւ մօտը կանդնած հարևան խանութպանին.

— Տես, անցեալ գիշերուայ նման, ինչպէս հիմի նղնղալով
գուրս կփախչի բօչի միջից:

Տակառը զլորուեց մի փոքր տեղ, ոչինչ չեղաւ:

— Մեռած կլինի. նկատեց հարևան խանութպանը ու մօ-
տեցաւ բռնեց զլորուող տակառը:

— Չ'ասի՞, որ մեռած կլինի. ասաց նա ցաւալի ծայնով:

— Ուղիղ, սարսափած բացականչեց խանութպանը և վա-
ղեց տակառի մօտ...

Այո, նա մեռած էր՝ տանշանքի կնիքը վրան:

Արևի առաջին շողերը ողջունեցին մարդիկ և կեանքը
շարժուեց իր ամենօրեայ թափով...

Ա. ՐՕՖՔՈՐ